

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ

ԳԷՈՐԳ ԾԱՌԱՅ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ ԵՒ ԱՆՀԱ-սանելի կամօքն Աստուծոյ Եպիսկոպոսապետ եւ Կաթու-ղիկոս Ամենայն Հայոց, Ծայրագոյն Պատրիարք Համազ-գական Նախամեծար Աթոռոյ Արարատեան Առաքելական Մայր եկեղեցւոյ Սրբոյ Կաթուղիկէ Էջմիածնի.

Մեծարգոյ Տեարց, որանց պատուականաց, պ. պ. Պօ-ղոսի, Արշակայ, Յակովբայ և Աբրահամու Յովսէփեան Ղուկասեան եղբարց, հարազատաց Մ. Աթոռոյս և սիրե-լեաց մերոց ի Տէր ողջոյն և օրհնութիւն Հայրապետական առատասցի.

Ի լրումն կոնդակի Մերոյ, տուելոյ յանուն Մեծարոյ եղբարցդ՝ որանցդ պատուականաց, յայտ առնեմք, եթէ ըստ յանձնարարութեան Ձեր, որպէս լիազօր Ղուկասեան տանն, Մեծարոյ պ. Արշակին Յովսէփեան Ղուկասեան, ըստ կանխագոյն գիտութեան, հրահանգի և պատուէրի Մերում ի ձեռն Դիւանիս բանակից գտեալ, ըստ ինչ-ինչ

խնդրոց, որ յարդարումն ընտրութեան հոգաբարձուաց, հաստատութեան նոցին, որպէս և տեսչի դպրոցին «Մարիամ-Ղուկասեան», յանուն արժանի յիշատակաց և յաւէրժ օրհնութեան հանգուցեալ քեռն Զերոյ Մարիամու,—արդիս ի գլուխ հանեալ գլուծումն խնդրոցդ, որք և հաւանութեան Մերոյ գտան արժանի, Կոնդակաւ Մերով, յանուն թեմական իշխանութեան Ղարաբաղի արտօնեցաք բանալ զդպրոցն ի հայրենի ծննդավայրի Զերում ի Շուշի քաղաքի, ըստ Հիմնական Կանոնացս,—յանձնող վարումն դպրոցական կենցաղոյն։

Կանոնքդ այդոքիկ, որպէս Հիմնական Կանոնք, յայս ձևակերպեցան.

ՀԻՄՆԱԿԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ

Շուշի քաղաքում հիմնուելիք

«ՄԱՐԻԱՄ ՂՈՒԿԱՍԵԱՆ» ՕՐԻՈՐԴԱՑ ԴՊՐՈՑԻ

Յօդ. Ա.—Շուշեցի եղբարք պ. պ. Պօղոս, Արշակ, Յակոբ և Աբրահամ Ղուկասեաններն ինքնայօժար կամքով իրենց հանգուցեալ քրոջ՝ Մարիամի յիշատակը յաւերժացնելու համար նուիրաբերում են Ս. Էջմիածնին ի սեփականութիւն երկու հարիւր հազար ռուբլի և Շուշում եղած սեփական երկյարկանի տունը, իւր ընդարձակ բակով և պարտիզով,—քառասուն հազար ռուբլի արժողութեամբ,—ստորև նշանակած Դ և Ժ յօդուածներում յիշած նպատակների համար։

Յօդ. Բ.—Ս. Էջմիածնին նուիրաբերած դրամագլուխը պէտք է մնայ անձեռնմխելի և պահպանուի Պետական գանձարկղում և գործադրուի միայն տոկոսները։ Իւրաքանչիւր տարի Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը տնօրինում է «Մարիամ Ղուկասեան» օրիորդաց դպրոցի Հոգաբարձութեան՝ դրամագլխի տոկոսներն ստանալու ու ծախսելու նոյն դպրոցի պէտքերի համար։

Յօդ. Գ.—Հոգևոր իշխանութիւնը՝ Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի հովանաւորութեամբ և տնօրինութեամբ, պ. պ. Ղուկասեանների ցանկութեան համաձայն, նոցա հանգուցեալ քրոջ՝ Մարիամի յիշատակը յաւերժացնելու համար, բանում է Ղուկասեանների ծննդավայր Շուշի քաղաքում նուիրած իրենց սեփական տանը Հայոց օրիորդաց եկեղեցական ծխական դպրոց «Մարիամ Ղուկասեան» անունով, սկզբում վեցամեայ դասընթացով, հայոց եկեղեցական ծխակ. դպրոցների ծրագրով ու կանոններով և ապա, ըստ կարելոյն, դասարանների թիւն աստիճանաբար աւելացնելով և այդ դպրոցը վերածելով Թիֆլիսի Գայիանեան կամ Ցոզնանեան կամ նման Հայ դպրոցների տիպի։

Յօդ. Դ.—Թէ նուիրաբերած տունը և թէ նոր կառուցուելիք որ և է շինութիւն «Մարիամ Ղուկասեան» դպրոցին յատկացրած հողի վերայ՝ պէտք է ծառայեն միմիայն իբրև դպրոցական շէնք և պատկանեն Ս. Էջմիածնին։

Յօդ. Ե.—Օրիորդաց «Մարիամ Ղուկասեան» դպրոցը կառավարուելու է հայոց եկեղեցական ծխական կամ միջնակարգ դպրոցների կանոնադրութեամբ, բոլոր առարկաների դասաւանդութիւնը լինելու է անպայման Հայ լեզուով, բացի Ռուսաց լեզուից, Ռուսաց պատմութեան և աշխարհագրութեան դասերից և ըստ ամենայնի նոյն տիպի դպրոցների համար մշակուած և Վեհափառ Հայրապետի կողմից հաստատուած ծրագրով ու հրահանգով։

Յօդ. Զ.—Օրիորդաց «Մարիամ Ղուկասեան» դպրոցը կառավարւում է Հոգաբարձութեամբ, մասնակցութեամբ Ղուկասեան տոհմի մի անդամի կամ տոհմի կողմից լիազօրուած մի անձի, որոնք պէտք է Հայ եկեղեցու անդամ լինին, ունենալով մի ձայնի իրաւունք։ Հոգաբարձութեան նախագահն է Ղարաբաղի թեմի առաջնորդը։

Յօդ. Է.—«Մարիամ Ղուկասեան» Օրիորդաց դպրոցի Հոգաբարձութիւնն ընտրում է Շուշի քաղաքի բոլոր եկեղեցիների ծխական ժողովից ընտրուած 10-ական պատգամաւորների խառն պատգամաւորական ժողովում, ընտրելով իւրաքանչիւր եկեղեցու կողմից երկերկու պատգամաւոր։

Յօդ. Ը.—«Մարիամ Ղուկասեան» Օրիորդաց դպրոցի տեսուչը ընտրում է նոյն դպրոցի Հոգաբարձութեան կողմից։

Յօդ. Թ.—«Մարիամ Ղուկասեան» Օրիորդաց դպրոցի Հոգաբարձութիւնը, ինչպէս և դպրոցի տեսուչը, հաստատում են Հայրապետական Կոնդակով։

Յօդ. Ժ.—Եղբարք Ղուկասեանների նուիրաբերած դրամի ամբողջ տոկոսները պիտի գործադրուին «Մարիամ Ղուկասեան» դպրոցի պահպանութեան՝ նորա գոյութեան ամբողջ ընթացքում. դպրոցի փակման դէպքում թէ տոկոսները, թէ շինութիւնները պիտի յատկացուին Ղարաբաղի որ և է ազգային Աստուածահաճոյ հաստատութեան՝ վերապահելով «Մարիամ Ղուկասեան» անունը, առաջարկութեամբ դպրոցի Հոգաբարձութեան և վերին հաճութեամբ ու հաստատութեամբ Վեհափառ Հայրապետի, Որը վերին հսկողն է ամբողջ նուիրաբերութեան նպատակի անշեղ գործադրութեան։

Յօդ. ԺԱ.—Օրիորդաց «Մարիամ Ղուկասեան» դպրոցի եկամուտները կազմելու են. ա) պ. պ. Ղուկասեանների Ս. Էջմիածնին նուիրած գումարի %-ը.—բ) Շուշի քաղաքի եկեղեցիների եկամուտներից նպաստ.—գ) Ղուկասեան տոհմից կամ մասնաւոր անհատներից նուիրաբերութիւններ.—դ) պատահական մուտքեր։

Յօդ. ԺԲ.—Եթէ Դ. և Ե. յօդուածների իմաստը ճշտու-

թեամբ չկատարուի՝ այդ դէպքում նուիրաբերութեան էական պայմանները համարում են խախտուած և եղած նուիրաբերութիւնն անցնում է պ. պ. Պօղոս, Արշակ, Յակոբ և Աբրահամ Ղուկասեանների ժառանգներին։

Արդ յայտ առնելով զայսմանէ սիրելեացդ Մերոց ի Տէր, յորդորեմք զՁեզ ձեռն ի գործ մխել փութանակի, տալով պատուէրս որոց անկ է, զի մի այլ ևս յապաղեսցին ի յարդարումն շինութեան, պիտոյից ուսումնականաց և այլ և այլ անհրաժեշտելի պակասաւոր մասից, զի ի յրսկզբանէ ուսումնական տարւոյ առաջիկայէ մարթասցի բանալ դպրոցն զդլուխս առաջի ուսումնատենչ զաւակաց մերոց, որք արարախտաբար յակնուսելի դիպացս զամ մի ողջոյն զրկեցան ի հոգևոր և ի մտաւոր սննդոց։ Իսկ Մեք պատուէր Հոգևոր իշխանութեան մերում տուաք ըստ Կոնդակի Մերոյ, որ 10 Մարտի տարւոյս, № 568, արկանել ձեռն յընտրութիւն Հոգաբարձուաց, ըստ նորոյս հրահանգի և կանոնաց, առաջի առնել Մեզ ի հաստատութիւն, զի և նորոգ ընտրեալ Հոգաբարձութիւնն մարթանալ կարիցէ զպարտեացն իւրոց կատարել մասն և լինել պատրաստ և կազմ ի հանդիսաւոր բացումն դպրոցին։

Այլ Աստուած որ միայն յաջողէ զամենայն յամենայնի տացէ և բարեացս այս և մեծի գործոյս յաջողութիւն, տեսանել Մեզ և Ձեզ զբացումն հոգևոր աղբերն, տալով ջուր կենդանի՝ հոգևոր սննդեան և քաղցրահամ՝ մայրենի բարբառոյն և գիտութեան հայրենի, զի քարակարկառ հայրենեացդ Ձերոց զաւակաց և դստերաց սիրտ և հոգի, միտք և իմացական ունակութիւնք, ըստ բնատուր ձրից և շնորհաց Աստուածայնոց, ի բարին, յԱստուածայինն, ի գեղեցիկն, ի ճշմարիտն առաջնորդեսցէ, լինել նոցա մանկունս հարազատ Մօրս Մերոյ լուսոյ, ս. Եկեղեցւոյս, ժրաջան և արի անդամս ազգիս, մարս պատուականս առ ի սնուցանել ի յետնորդս սերնդոց իւրեանց զսերմանիս առաքինութեան և համեստութեան, որ ի բուրաստանի Ձերոյ

ընկալան ի ձեռն դաստիարակութեան, որ ընդ հովանեաւ մաքուր աղօթից մօրն իւրեանց հոգևորի և հովանաւորի Մարիամայ քեռն Ձերոյ, յոր անուն և դպրոցդ։

Աղօթեմք զԱստուած առատանալ ի տուրս իւր առ Ձեզ առ ամենեսինսդ, պատսպարել ընդ հովանեաւ ամենազօր աջոյն իւրոյ զՁեզ և զզաւակունսդ և զընտանիս ամենեցունցդ, բաշխելով Ձեզ՝ աւագագունիցդ քաջառողջութիւն առ ի յանշեղ առաջնորդութիւն երիտասարդ սերընդեան տանդ Ղուկասեան և նոցա սէր առ հայրենին և առ մերս ժառանգութիւն հոգևոր, լինել պտուղ բարի ծառոցդ բարեաց և պիտանաւորաց։

Քաղցրասցի Տէր յողորմութեան իւրում ի նա, յոր անուն և դպրոցդ հիմնի, ի սփոփումն սիրող սրտից հարազատիցդ։

Ողջ լերուք, զօրացեալ ի Տէր և օրհնեալ յԱմենակալէն Հօրէ և ի Մէնջ. ամէն։

ԳԷՈՐԳ Ե.
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՑՆ ՀԱՅՈՑ

Ի 10 մարտի 1916 ամի
Ըստ տոմարիս ՌՑԿԵ
ի Հայրապետութեան Մերում Ե. ամի
յԱրարատեան Մայր Աթոռ
Ս. Էջմիածնի
ի Վաղարշապատ
Թ. 569

ԳԷՈՐԳ ԾԱՌԱՑ ՑԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ ԵՒ ԱՆՀԱ-

սանելի կամօքն Աստուծոյ Եպիսկոպոսապետ եւ Կաթուղիկոս Ամենայն Հայոց, Ծայրագոյն Պատրիարք Համազգական Նախամեծար Աթոռոյ Արարատեան Առաքելական Մայր Եկեղեցւոյ Սրբոյ Կաթուղիկէ Էջմիածնի.

Առ Վսեմաշուք Լօրդ Ջէյմս Բրայս, անդամոյ Պորհըրդարանին Աւագաց, առատասցի ողջոյն ի Մէնջ և օրհնութիւն յԱռաքելական Աթոռոյս Հայաստանեայց Ս. Եկեղեցւոյ։

Մինչ բանաւոր Հօտ Մեր ի սահմանս Տէրութեան Տաճկաց, իբրև զոչխար ի սպանդ վարեցաւ ի գենումն՝ մահուամբ նահատակաց և սուգ զգեցաւ երկիր մեր գեղանիստ ի ծագաց մինչև ի ծագս, բազուկ անօրինին ոչ դադարեցաւ ի զրաւելոյ զկեանս արանց և կանանց, ծերոց և մատաղատի զաւակաց Մերոց հոգևորաց, ոչ դադարեցին ամենևին կարաւանք սգոյ և հեծութեան ուղղել զգնացս իւրեանց ի Հարաւ՝ բռնութեամբ և զինու զօրութեամբ, դիակունք նոցա ոչ միայն զյարկս բնակութեան իւրեանց լցին, այլ և զձորս Հայրենեաց խցին, բազում էին, որ զառապարս և զանկոխ ուղիս զարդարեցին անթոշակ մահուամբ,այլ սակաւք ի սակաւուց, որք ապրեցան, առ ի գտանել ի Միջագետս և յԱսորիս տեղի վերջին հանգստեան,—ահա եկն եհաս բարբառ կենարար և սփոփիչ արդարն բողոքանաց ազնուամիտ Որդւոյդ Մեծին Բրիտանիոյ յունկն Մեր և զհաւաստիս գթառատ մարդասիրութեան Ձերոյ եբեր առ Մեզ, որ իբրև զցող զուարթարար շաղեաց և եկաց ի սիրտ Մեր և ի հոգի խոշտանգեալ փոքու Հօտին Մերոյ։

Ի սաստկութենէ տառապանացս ընդկորեալ՝ զմարգարէին ածէի զբան զմտաւ, եթէ «Ո՞ տայր զգլուխ իմ ի ջուր «և զաչս իմ աղբիւրս արտասուաց և լայի զժողովուրդս «զայս զտիւ և զգիշեր և զվիրաւորեալս դստեր ժողովրդեան իմոյ», մխիթարելով մխիթարեցաք, զի արդարամիտ

և ազնուագոյն որդիք ազգաց մեծաց և ազատաց, յորոց և զմին զՎսեմաշուք Տէրդ գիտել գիտեմք, զպաշտպանութիւն տկարացն ընկալեալ յանձինս, փութացին դատ առնել հրապարակաւ ընդ Մեզ և ընդ ոսոխի մերում և չ'տալ թոյլ, զի իսպառ կոխան լիցուք ոտից թշնամեաց մերոց։

Ցուսամք ի Տէր, զի ամենայն ջանք մարդասիրութեան Ձերոյ ունիցին արդիւնս և ի շնորհս Ձեր և զհետ Ձեր ընթացողաց՝ թերևս ապրեսցէ և կեցցէ Ճեացորդ Հօտին Իմոյ և զկնի յարդարման իրաց և հաշուակալութեան աշխարհասասան պատերազմիս՝ կարասցեն անդրէն հաստատիլ ի բնագաւառս իւրեանց, ի Հարցն իւրեանց ժառանգութիւն և վերստին կանգնել զկործանեալ գեղս և աւանս և զՏաճարս իւրեանց Տէրութեանց պաշտաման։

Արդ՝ ընկալարուք, Վսեմաշուք Լորդ, ի Մէնջ, որպէս ի Գլխոյ և ի Հովուապետէ ամենայն Հայոց ընդ ամենայն աշխարհ, զհաւաստիս ջերմ երախտագիտութեան համօրէն Ազգիս Իմոյ, զորս տածեմք առ ազնուազարմն Անգղիա և առ հզօր Դաշնակիցս իւր, որք ըստ աւանդից Նախնեաց իւրեանց զհետ եղեալ Իրաւանց և Արդարութեան և Պատուոյ, ի դարուց ի դարս կան ի պաշտպան տկարաց և փոքու ազանց։ Որոց և զօրաւիգն եղիցի Տէր յաղթել թշնամեաց, որ որպէս և հատուցանել զտրիտուր ամենայն չարեացն, եկին հասին ի վերայ մեր։

Շնորհ Տեառն Իմոյ Յիսուսի Քրիստոսի առ Ձեզ, Տէր, և խաղաղութիւն Նորա ի վերայ Մեծի Հայրենեացդ և օրհնութիւն Մեր առ Ձեզ հանապազ։ Ամէն։

ԳԷՈՐԳ Ե.
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՑՆ ՀԱՅՈՑ

Ի 27 Ապրիլի 1916 ամի
Ըստ տոմարիս ՌՅԿԵ
ի Հայրապետութեան Մերում Ե. ամի
ՅԱյրարատեան Մայր Աթոռ
Ս. Էջմիածնի
ի Վաղարշապատ
Թ. 937